ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՂ ՄԱՐԶԿՈՄՈՒՄ

Օրերս կուսակցության ԼՂ մարզային կոմիտեում տեղի ունեցավ խորհրդակցություն, որին հրավիրվել էին Ստեփանակերտ քաղաքի ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչներ։ Խորհրդակցությունում հանդես եկավ կուսակցության ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանը։ Նա պատմեց ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղարության հետ հանդիպման մասին, որը նվիրված էր Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված իրադրությանը։

Խոսելով այն մասին, որ Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ստեղծված լարված դրությունը վերջին շաբաթներին ձեռք է բերել մի այնպիսի ձև, որը հղի է և կարող է անցանկալի հետևանքների հասցնել, ընկ. Հ. Ա. Պողոսյանը նշեց, որ այս պայմաններում պետք է հանդես բերել մեծագույն զգուշություն և խոհեմություն, սկզբունքային կուսակցական գնահատական տալ ամեն մի ծայրահեղ քայլի, կասեցնել առանձին անպատասխանատու անձանց գրգռող, անհավասարակշռված գործողությունները կամ կոչերը։

Չորրորդ շաբաթն է, որ Ստեփանակերտի, Մարտակերտի, Մարտունու և Ասկերանի արդյունաբերական, տրանսպորտային, շինարարական ձեռնարկությունների գերակշիռ մասը չի աշխատում։ ՍՄԿԿ Կենտկոմում կայացած հանդիպման ժամանակ այդ փաստը գնահատվեց որպես վերակառուցման գործին խանգարող, երկրի էկոնոմիկային վնաս հասցնող գործողություն, նշվեց, որ նման անհաստատ, հեղհեղուկ վիճակը չի կարող նպաստել որևիցե, այդ թվում ազգամիջյան հարաբերություններին առնչվող հարցերի պոզիտիվ լուծմանը։ Այդ ամենին սկզբունքային գնահատական է տրվել 1988 թ. մայիսի 26-ի մարզկոմի բյուրոյի նիստում։

Յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր մտավորական, հիմնարկ - ձեռնարկությունների ղեկավարները իրենց պատասխանատու պետք է զգան շարունակվող գործադուլների համար, պետք է կենտրոնացնել բոլոր ուժերը, որպեսզի համոզեն մարդկանց վերադառնալու իրենց աշխատատեղերը։

Եթե կտրուկ շրջադարձ չկատարվի ստեղծված բարդ հոգեբանական ճնշող վիճակից մարդկանց հանելու և գործադուլները դադարեցնելու համար, ապա յուրաքանչյուր կոմունիստ և առաջին հերթին ղեկավար օղակների պատասխանատու աշխատողները կստանան սկզբունքային կուսակցական գնահատական։

Մարզում և առաջին հերթին Ստեփանակերտում ստեղծված անկայուն վիճակը և, հատկապես գործադուլները, խանգարում են Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության առաջադրած պահանջի արդարացի լուծմանը, վնասում մեր երկրում իրականացվող վերակառուցման ամբողջ գործին։

Մարդիկ պետք է գրավեն իրենց աշխատատեղերը՝ այս կարծիքը հայտնեցին խորհրդակցությունում ելույթ ունեցողները՝ գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար Վարդան Հակոբյանը, վաստակավոր արտիստուհի Ժաննա Գալստյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Արզիկ Մխիթարյանը, կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Համլետ Գրիգորյանը, մանկագիր Գուրգեն Գաբրիելյանը, տնտեսական գիտությունների թեկնածու Օլեգ Եսայանը, «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր Մաքսիմ Հովհաննիսյանը և ուրիշներ։